



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեալափով կամ կրիչով
մեալափին կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1720



ՄՈՒՄՈՒՆ

ԻՏՈՒԳԵՆԵԿ



12

LIBRARY
OF THE
UNIVERSITY OF
TORONTO

UNIVERSITY OF TORONTO
LIBRARY

ՀԵՅՏՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԻՇՅԻՆ ՀԵՆՐԵՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻՆԻ ԲՈՒՐՈ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԸՏՄԷ:

Ի. ՏՈՒՐԳԵՆԵԿ

Մ Ո Ւ Մ Ո Ւ

ՊԱՏՄՎԱԾՔ ԶՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՑ



Թ ա ռ գ մ. Ս Տ. Զ Ո Ր Յ Ա Ն



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ—№ 91

ՅԵՐԵՎԱՆ—1924



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1911

REPORT

OF THE BOARD OF TRUSTEES

1911

CHICAGO, ILL.



CHICAGO, ILL.

Printed and bound by the University of Chicago Press



1911

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Սրանից 60—70 տարի առաջ Ռուսաստանի գյուղացիները նորտ եյին, կալվածատերերի սեփականությունն եյին կազմում: Նրանք շունեյին հող, իրավունք չեմ ազատություն: Այդ ըրտը կալվածատերերի ձեռքին եր: Ամբողջ տարին աշխատում եյին նրանք կալվածատերերի համար, մշակում եյին նրանց հողերը, կերակրում չեմ հաց եյին տալիս նրանց: Իսկ կալվածատերերը նրանց նայում եյին, ինչպես մի ասլրանքի, վորին ի՛նչ ուզեն՝ կարող են անել: Չսիրած նորտին ծախում եյին, ինչպես անասուն, կամ գինվոր եյին դրկում, իսկ սիրած նորտին՝ կին թե մարդ, տնից-տեղից զրկելով՝ յերբեմն կինը մարդոց քածանելով, մարդը կնոջից, բերում եյին իրենց տան ծառա: Եստ հաճախ ել ամենաթեթեմ կանցանքի համար նորտին երպոտի հարվածներ եյին տալիս, որերով զրկում եյին հացից, քանտարկում կամ կասում եյին կատաղի՝ ձիերի պոչից յեմ քաց թողնում արծակ դաշտերում:

Եեմ ամեն մի կալվածատեր ուներ այսպիսի հարյուրավոր, հազարավոր, տասնյակ հազարներով նորտեր:

Այս զրվածքի նեղիմակ Իվան Տուրգինեմն ինքը կալվածատիրոջ վորդի յեր: Նրա մայրը մի դաժան կին եր յեմ վորպես կալվածատիրոհի շտեմնված նեղություններ եր տալիս իր նորտերին: Մանուկ Տուրգինեմն ասլրեց յեմ մեծացավ նորտերի շրջանում, տեսավ մոր, նրա կատալարիչների ու զործակատարների խտությունները, թշվառ նորտերի տանջանքները յեմ նե-

տո, հասակն առնելով, սկսեց զրել նրանց զրկանքներով լի կյանքի մասին: Իր զրվածքներով նա ցոյց եր տալիս, վոր նոր տերն ել մարդիկ են, նրանք ել ունեն սիրտ յեվ մարդկային զգացումներ յեվ չի կարելի պահել նրանց անասունների վիճակում: Եեվ ցնցող պատկերներով, կծու խոսքերով Տուրգենևին իր զրվածքներում բողբոմ եր նորոտաթիրական անիրավ, հակամարդկային կարգերի դեմ: Եեվ նրա բողբոբը դարձավ հասարակական ուժ ու նպաստեց մեծապես նորտերի կիսատ ազատագրությանը 1861 թվին:

Ճորտատիրական այդ շրջանը նկարագրել են շատ ոոս գրողներ, բայց դրանցից յեվ վոր մեկը Իվան Տուրգենևի պես չի պատկերացրել նրանց թշվառ կյանքը յեվ վոր մեկի զրվածքները այն նշանակությունն ու ազդեցությունը շեն ունեցել նորտերի ազատագրության համար, ինչպես Տուրգենևի «Վորտրդի Հիշատակարանը», վոր նորտերի կյանքից առնված զեղարվեստական ցնցող պատկերների մի ժողովածու յե:

Տուրգենևի այդ զրվածքներից ե յեվ «Մումուն», վոր հրատարակում ենք մեր մանուկ յեվ պատանի ընթերցողների համար:

ՊԵՏԶԲԱՏԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԳԻՍ

Մ Ո Ւ Մ Ո Ւ

Մոսկվայի հեռավոր փողոցներից մեկում սպիտակ սյու-
ներով և ծոված պատշգամբով մի գորշ տան ապրում էր յեր-
բեմն մի ազնվական այրի կին բազմաթիվ նորա-ծառանկերով
շրջապատված: Նրա փրդիները ծառայում էին Պետերբուր-
գում, աղջիկները ամուսնացել էին: Նա շատ սակավ էր
յերևում հասարակության շրջաններում և իր ժլատ ու ար-
խուր ձերության վերջին տարիները անց էր կացնում ա-
ռանձնության մեջ: Նրա կյանքի անուրախ ու մոայլ ցերեկը
վաղուց էր անցել, բայց նրա յերեկոն էլ գիշերից խավար էր:

Նրա ծառայողների մեջ ամենից աչքի ընկնողը զոնա-
պան Գերասիմն էր՝ բարձրահասակ և վիթխարի մի տղամարդ,
վոր ի ծնե խուլ ու համբ էր: Տիրուհին նրան բերել էր գյու-
ղից, ուր նա մեն-մենակ, յեղբայրներից բաժան՝ ապրում
էր մի փոքրիկ խրճիթում: Անսովոր ուժի տեր՝ նա շոքս
մարդու բան էր անում մենակ: Տեսնողը հաճույք էր պզուժ,
թե ինչպես և նա վարում, հնձում, կալսում: Մշտական լը-
սությունը առանձին հանդիսավորություն էր տալիս նրա
աշխատանքին: Նա յերևելի ունչպար էր և, յեթե նրա դրժ-
բախտությունը չլիներ—ամեն մի աղջիկ սիրով կառներ նր-
բան: Բայց ահա Գերասիմին բերին Մոսկվա, յերկարածիտ
կոշիկներ առան, ամառվա համար կաֆտան կարեցին, ձմեռ-
վա համար բուրբ, ձեռք բան ու ավել սովին և զոնապան կու-
րեցին:

Հենց սկզբից իր նոր կյանքը բնավ զուր չեկավ նրան:

Մանկությունից նա սովոր եր դաշտային աշխատանքի և գյուղական կյանքի: Տեղափոխվելով բաղաձ նա չեր հասկանում ինչ է կատարվում իր հետ. ձանձրանում եր և տարակուսում, այնպես, ինչպես տարակուսում է մի արջառ, վորին հանկարծ կանաչ, թարմ խոտից կտրելով՝ վերցնում են ու գնում յերկաթուղու վագոնը և շրխկոցով ու թրխկոցով տանում. թե ո՛ր—հայտնի չէ: Իր նոր գործը, գյուղական ծանր աշխատանքից հետո, Գերասիմին խաղ ու պար եր թրվում. կես ժամում նա ամեն ինչ վերջացնում եր և բակի մեջտեղ կանգնում ու բերանարաց նայում անցուղարձ անող մարդկանց, կամենալով կարծես իմանալ իր անհասկանալի կյանքի բացատրությունը, կամ թե չէ քաշվում եր վորևէ անկյուն և, թին ու ավելը հեռու շարտելով՝ յերեսն ի վայր ընկնում եր գետին և ժամերով անշարժ պառկում կրծքի վրա, ինչպես դերված մի գազան: Բայց մարդն ընտելանում է ամեն բանի, և Գերասիմն ել, վերջի վերջո, ընտելացավ քաղաքի կյանքին: Գործը մեծ չեր. նրա պարտականությունն այն եր, վոր բակը մաքուր պահի, որական յերկու անգամ տակառով ջուր բերի, փայտ կտրի և ջարդի խոհանոցի և տան համար, ոտար մարդիկ՝ շթողնի և դիշերնեքը պահապան կանգնի: Յեվ պետք է ասած, նա իր պարտականությունը յեռանդով կատարում եր: Յերբեք բակում չէյի տեսնի չոփի մի կտոր կամ թափված աղբ: Յեխ ժամանակ, յերբ ձին չկարողանար ջրի տակառը հանել մի վորևէ ցեխ տեղից, բավական եր միայն, վոր Գերասիմն ուսով հրեր, վոչ միայն տակառի սայլակը, ձին ինքն ել եր ծուլ լինում տեղից, կամ յերբ սկսում եր փայտ ջարդել, կացինը նրա ձեռին զրնգում եր ապակու պես և տաշեղներն ու փայտի կտորտանքը թռչում էյին ամեն կողմ. իսկ ինչ վերաբերում է գողերին—բանին, դա արդեն, այն բանից հետո, յերբ մի անգամ դիշերը յերկու գող

բաներով՝ նրանց ճակատները խփել էր իրար, ախպես եր խը-
փել, վոր հետո թեկուզ նրանց վոստիկանատունն շտաներ ել,
թաղում բոլորն սկսեցին հարգել նրան, մինչև անգամ ցերեկ-
վա անցորդները, արդեն վոչ թե գողեր, ալլ պարզապես ան-
ծանոթ մարդիկ, ահարկու դոնապանին տեսնելիս՝ հեռու
եյին անցնում:

Տան մյուս սպասավորների հետ Գերասիմը վոչ թե բա-
րեկամական, ալլ մոտիկ հարաբերության մեջ էր. նա դրանց
համարում էր իրավորներ: Նրանք Գերասիմի հետ բացատրվում
եյին նշաններով, և Գերասիմը նրանց հասկանում էր, ճշտու-
թյամբ կատարում էր բոլոր հրամանները, բայց իր իրավունք-
ները նույնպես զիտեր. վոչ-վոք ծառայողներից չէր համար-
ձակվի նստել նրա տեղը սեղանի շուրջը: Գերասիմն առհասարակ
խիստ և լուրջ բնավորություն ուներ. ամեն բանում կարգ էր
սիրում. մինչև անգամ քաղաղները նրա ներկայությամբ
չեյին համարձակվում կովել, ալլապես վայ նրանց: Տեսներ թե
չե, իսկույն յերկուսի վոտքերից ել կբռներ, մի քանի ան-
գամ անիվի պես կպտտեր և կշարտեր յուրաքանչյուրին մի
կողմ: Տիրուհու բակում կային և սագեր, բայց սագը հայտ-
նի յե, վոր լուրջ և խոհեմ թռչուն ե: Գերասիմը նրանց
վերաբերվում էր հարզանքով, հետևում էր և կերակրում:
Նրան տվել էյին մի խուց, վոր գանվում էր խոհանոցի գըլ-
խին. այդտեղ նա իր համար, իր ճաշակով, կաղնի տախտակ-
ներից շինել էր շորս վոտանի մի տախտ, իսկական հսկայի մի
տախտ, վոր յեթե հարյուր փութ բան գնեյիր վրան— չէր
ճկվի. տախտի տակ գանվում էր մի պինդ-ամուր սնդուկ,
անկյունում դրված էր նույնպիսի սեղան, իսկ սեղանի կող-
քին մի յեռոտանի նստարան: Գերասիմն իր խուցը փակում
էր կողպեքով և բանալին կախում էր դոտակից: Չէր սիրում,
վոր մոտը մարդիկ գնան-գան:

Այսպէս անցավ մի տարի, և այդ տարվա վերջում Գերասիմին պատահեց մի փոքրիկ դեպք:

Իրիկնադեմ եր: Գերասիմը հանդիստ անցնում եր գետափով և ջրին նայում: Հանկարծ նկատեց, վոր մի ինչ-վոր բան հենց ափի մտտ շարժվում եր ազմի մեջ: Նա կոացավ և տեսավ մի փոքրիկ շան լակոտ՝ սև ու սպիտակ բծերով, վոր շնայած իր ջանքերին, վոչ մի կերպ չեր կարողանում ջրից դուրս գալ: Բարձրանում եր, սահում և զողզողում իր ամբողջ թաց, նիհար մարմնով: Գերասիմը նայեց խեղճ շնիկին, հետո մի ձեռով վերցրեց, կոնատակը դրեց նրան և մեծ-մեծ բայլերով շտապեց տուն: Յերբ հասավ և մտավ իր խուցը, փրկած շանը դրեց տախտի վրա, ծածկեց իր հաստ վերնադեպտով, ապա՝ նախ վազեց դոմբ ծղնոտի, հետո խոհանոցը մի բաժակ կաթի: Վերադարձավ, վերարկուն զգուշութամբ յետ քաշեց, ծղնոտը փռեց շան տակ ու կաթը դրեց տախտի վրա՝ նրա առաջ: Խեղճ շնիկը ընդամենը յերեք շաբաթական եր. աչքերը նոր բացվել էին, մի աչքը նույն իսկ փոքր ինչ մեծ եր թվում մյուսից: Բան լակել դեռ չեր կարողանում: Գողում եր և աչքերը կուշ ածում: Գերասիմը յերկու մատով բռնեց նրա գլուխը և դունչը մեկնեց կաթին: Փոքրիկ շունը հանկարծ սկսեց ազահարար լակել կաթը և փնչացնել միաժամանակ: Գերասիմը նայում եր նրան, նայում և հանկարծ ծիծաղից թուլանում... Ամբողջ գիշեր նա քաշ յեկավ այդ փոքրիկ շան հետ: սրբեց, շորացրեց նրան, ծածկեց և, վերջապես, բնեց նրա կողքին մի ուրախ և խաղաղ բնով:

Վոչ մի մայր այնպէս չի խնամի իր յերեխային, ինչպէս Գերասիմն եր խնամում իր շնիկը: Փոքրիկ շունն սկըգբում շատ թույլ եր, նիհար և աղեղ, բայց հետզհետե իրան հավարեց, լցվեց, իսկ ութ ամսից հետո, շնորհիվ իր ազա-

տարարի անխոնջ հոգատարութեան, դարձաւ սպանական ցեղի մի լավ շուն՝ յերկար ականջներով, մազոտ խոզովակաձև պոչով և արտահայտիչ խոշոր աչքերով: Նա զարմանալի կապված եր Գերասիմին և մի քայլ անգամ չեր հեռանում նրանից. բոլոր ժամանակ հետևում եր նրան, պոչը շարունակ շարժելով: Գերասիմը նրա անունը դրեց Մումու (համբերը գիտեն, վոր իրենց հանած ձայնը զրավում ե ուրիշներէ ուշադրութեանը): Տան մարդիկ բոլորն ել սիրեցին նրան և նույնպես Մումու ելին կանչում: Մումուն անշափ խելոք եր. մոտենում, քննում եր բոլորին, քայց սիրում եր միայն Գերասիմին: Գերասիմն ինքը զժի պես սիրում եր նրան... ուստի նրան դուր չեր գալիս, վոր ուրիշները շոյում են իր շանը. վախենում եր, ի՞նչ ե, հայանի չե: Գերասիմին առաջոտները Մումուն եր գարթեցնում փեշից քաշելով, սանձից բռնած սայլակի մոտ եր բերում ջրկիր ձիուն, վորի հետ լավ բարեկամ եր, դեմքին լըջութեան տված Գերասիմի հետ գնում եր գետը, հսկում եր նրա ափելներն ու թիւրը և վոչ-վորի մոտ չեր թողնում իր տիրոջ խցին: Գերասիմը նրահամար դռան մեջ մի անցք եր-շինել, և Մումուն կարծես զգում եր, վոր ինքը միայն Գերասիմի խցում ե լիակատար տեր, ու այդ պատճառով ներս մտնելուն պես խսկույն ինքնագոհ դեմքով թռչում եր տախտին: Նա գիշերը բոլորովին չեր քնում, քայց և անտեղի չեր հաջում, ինչպես վորևե հիմար մի շուն, վոր յետին թաթերի վրա նստած, դունչը դեպի վեր, աչքերը փակ՝ հաջում ե ձանձրույթից, այնպես, աստղերի վրա և, սովորաբար, յերեք անգամ իրար յետևից: Վոչ. Մումուն այդպես չեր. նա իր բարակ ձայնը ի դուր տեղը չեր հանի յերբեր. նա իր ձայնը հանում եր այն ժամանակ միայն, յերբ ոտար մի մարդ եր մոտենում իրենց պարսպին, կամ վորևե մի տեղ կասկածելի ազմուկ եր բարձրանում կամ

շըշյուն... Մի խոսքով՝ Մուսուն յերևելի պահպանութուն եր
անուս։ Ճիշտ ե, նրանից բացի, բակում կար և ծեր շղթա-
յակապ շուն, վորին սակայն յերբեք, մինչև անգամ դիշեր-
ները, բաց չեյին թողնում, և ինքն ել դառամած լինելով՝
ազատութուն չեք ել պահանջում։ Իր համար կուշ յեկած
պառկում եր իր բնում և յերբեմն միայն լսեցնում եր իր
խապոտ հաջոցը, վոր իսկույն ել կարում եր, կարծես ինքն
ել զգալով, վոր դա անողուտ ե։ Մուսուն տիրուհու տունը
բոլորովին չեք մտնում, և յերբ Գերասիմը փայտ եր տա-
նում ներս, նա մնում եր դուրսը և սանդուղի մոտ ան-
համբեր սպասում Գերասիմին՝ ականջները սրած, զլուխը
դարձնելով մեկ գեպի աջ, մեկ գեպի ձախ, նայած վոր կող-
մից եր դռների թխկոց լսվում։

Այսպես անցավ մի տարի ևս։ Գերասիմը շարունա-
կում եր իր դճնապանութունը և շատ զոհ եր իր վիճակից,
յերբ հանկարծ մի անսպասելի գեպը պատահեց։ Այն ե՝
գարնան մի գեղեցիկ որ տիրուհին իր տանն ապրող ազգա-
կանուհիների հետ անց ու դարձ եր անում հյուրասենյակում։
Տրամադրութունը լավ եր, հանաքներ եր անում, ծիծա-
ղում։ հետի աղջիկներն ել ծիծաղում եյին և նույնպես
հանաքներ անում, բայց առանձին ուրախութուն չեյին զգում։
տանն այնքան ել ուրախ չեյին լինում, վոր տիրուհու վրա
ուրախութուն եր գալիս, վորովհետև, ամենից առաջ, նա
բոլորից պահանջում եր, վոր անկեղծորեն ու լիասիրտ մաս-
նակցեն իր ուրախության, և բարկանում եր, յեթե վորեկ
մեկի գեմքը չեք փայլում ուրախությունից, և յերկրորդ՝ նրա
այդ ուրախ բազենները յերկար չեյին տևում և, սովորաբար,
փոխվում եյին մոռյլ ու կծու տրամադրության։ Քաղցր
ժպիտը շուրթերին հյուրասենյակում գրոսնելով՝ տիրուհին
մոտեցավ լուսամուտին։ Լուսամուտի առջև ծաղկանոց եր

շինված, և հենց այդ բողոքներն ծաղկանոցի մեջտեղը, վարդի թփի տակ, Մուսուհն պառկած՝ յեռանդով վտակոտ եր կռծում: Տիրուհին նկատեց նրան:

— Ահ,— բացականչեց նա հանկարծ,— սա ինչ շուն է:

Ազգականուհին, վորին զիմեց տիրուհին, շփոթվեց և շիտացավ ինչ պատասխանել:

— Չը...ը... զիտեմ,— կմկմաց նա,— կարծես, կարծես... համբի՛նն է...

— Ահ,— ընդհատեց տիրուհին,— ինչ սիրուն շնիկ. ասացեք այստեղ բերեն: Վաղձեց է նրա մտա: Ինչպես է վոր յես մինչև հիմա սրան չեմ տեսել... Ասացեք բերեն:

Ազգականուհին իսկույն թռավ նախասենյակ:

— Տղա, ա՛յ տղա— կանչեց նա,— Մուսուհին բերեք այստեղ. շուտ: Ծաղկանոցումն է:

— Դրա անունը Մուսուհն է,— հարցրեց տիրուհին,— շատ լավ անուն է:

— Այո, շատ,— արտասանեց ազգականուհին.— Շուտ, Ստեփան, շուտ:

Ստեփանը, մի յերիտասարդ, վոր սպասավորի պաշտոն ուներ, նետվեց ծաղկանոց և ախ ե՛քիչ եր մնացել բռներ Մուսուհին, բայց նա ճարպկորեն դուրս պրծավ նրա մատների տակից և, պոչը ցցած, վազեց Գերասիմի մոտ, վոր այդ ժամանակ խոհանոցի առաջ դատարկում եր ջրի տակառը: Ստեփանը վազեց նրա յետևից և աշխատեց բռնել տիրոջ վտանքի մոտ, բայց Մուսուհն շարունակ ծուլ եր լինում և խաբս տալիս: Գերասիմը ժպտալով նայում եր այդ քաշկըտուռքին: Յերկար քաշ գալուց հետո Ստեփանը վերջապես գլուխը բարձրացրեց և նշաններով արագ հասկացրեց Գերասիմին, թե տիրուհին ահա քու շունն ուզում է, պիտի իր մոտ տանել: Գերասիմը մի քիչ զարմացավ, բայց կանչեց Մուսուհին, վերցրեց և տվեց Ստեփանին:

Ստեփանը բերեց նրան հյուրասենյակ և զրեց հասակին։ Տիրուհին փաղաքշահան ձայնով նրան կանչեց իր մտա Մուսուսն, վոր իր որում այսպիսի շքեղ սենյակներում չեք յեղած՝ վախեցած սաստիկ և նետովեց դեպի դռները, բայց Ստեփանի կողմից յետ մզվելով՝ դողդողաց և պատին կպավ։

— Մուսուս, Մուսուս, արի ինձ մտա, արի՛ տիրուհուս մտա, — ասում եր տիրուհին. — Արի, հիմար... մի վախի... արի։

— Մոտեցիր, Մուսուս, մոտեցիր խանումին, — ասում էին տիրուհուն շրջապատող կանայք. — մոտեցիր։

Բայց Մուսուսն տխուր նայում եր շուրջը և տեղից չեք շարժվում։

— Մի բան բերեք թող ուտի, — ասաց տիրուհին. — ինչ հիմարն ե, խանումին չի մոտենում։ Ինչից ե վախենում։

— Դեռ չի ընտելացել, — ասաց կանանցից մեկը յերկշոտ ձայնով։

Ստեփանը փոքրիկ պնակով կաթ բերեց և զրեց Մուսուսի առջև, բայց Մուսուսն մինչև անգամ հոտ ել չքաշեց. նա բոլոր ժամանակ դողում եր և առաջվա պես շուրջը դիտում։

— Ահ, ինչ հիմարն ես, — արտասանեց տիրուհին մոտենալով և, կանաչով, ուզեց շոյել նրան, բայց Մուսուսն դողահար գլուխը թեքեց և առամները շիկացրեց։

Տիրուհին ձեռը յետ քաշեց արագ։

Մի ակնթարթ լուսթյուն տիրեց։ Մուսուսն մի թույլ կլանչոց արձակեց, ասես արտոնում եր արածի համար և ներողություն խնդրում։

Տիրուհին յետ քաշվեց և հոնքերը կիտեց։ Շան հանկարծակի շարժումը վախեցրեց նրան։

— Ախ, — բացականչեցին շրջապատող կանայք բոլորը միասին. — խո՛ւմ չկժեց (Մուսուսն իր կյանքում յերբեք վոչ-վոքի չեք կժած). — Ա՛խ, ա՛խ։

— Կորցրու դրան, — խոսեց պառաւիը փոխված ձայնով. —
Զգվելի՛ր շուն: Ի՛նչ կատաղածն ե:

Յե՛վ դանդաղ շուռ յեկավ ու գնաց դեպի իր առանձնա-
սենյակը: Ազգականուհիները վախով նայեցին իրար և ուզեցին
հետեւել նրան, բայց տիրուհին կանգնեցրեց նրանց, սառը
նայեց բոլորին ու արտասանեց. «Մէր-եք զալիս վոր. յես
հո ձեզ չեմ կանչում», և գնաց:

Կանայք հուսահատ ձեռները թափ տվին Ստեփանի վրա,
Ստեփանը շանը բռնեց և զցեց դուրս, ուղիղ Գերասիմի վոտ-
ների մոտ: Կես ժամ հետո արդեն տանը թագավորում եր մի
խոր լուսթյուն. պառավ տիրուհին նստել եր իր բազմոցին
փոթորկարեր ամպից ել մտայլ:

Մինչև յերեկո նրա տրամադրությունը վատ եր. վոչ-վոքի
հետ չխոսեց, թուղթ չխաղաց և գիշերը անցրեց վատ: Իսկ
հետևյալ օրը կանչեց իր մոտ ծառայողների ավագ Գավրիլային:

— Առն, խնդրեմ, — սկսեց նա, — այդ ի՛նչ շուն եր, վոր
ամբողջ գիշեր հաջում եր մեր բակում և չթողեց քնեմ:

— Շունը՞... Վորը՞... Գուցե խուլի շունը, — խոսեց
Գավրիլը կմկմալով:

— Զգիտեմ, խուլինն եր, թե մի ուրիշինը, միայն չթողեց
վոր քնեմ: Յես զարմանում եմ՝ այդքան շներն ինչի՛ համար
են: Հետաքրքիր ե: ԶԵ վոր մենք մեր բակում շուն ունենք:

— Ինչպես չե, կա...

— Դե, ել ի՛նչ. ավելորդ շունը մեր ինչի՛ն ե պետք:
Անկարգություններ ե անելու միայն: Նայող չկա, ավագ չկա
— անա թե ինչ: Յե՛վ խուլի ինչին ե պետք շունը: Ո՞վ ե նը-
րան թույլ տվել, վոր իմ բակում շուն պահի: Յերեկ յես մո-
տեցա լուսամուտին, տեսնեմ զա ծաղկանոցում պառկած,
ինչ-վճր կեղտոտ բան բերել ու կռծում ե. իսկ այնտեղ չէ՞
վոր վարդեր են անկված:

Տիրուհին լռեց:

— Այսօր իսկ դրան շտեմնեմ... լսում ես:

— Լսում եմ:

— Այսօր իսկ: Առայժմ գնա:

Գավրիլան դուրս յեկավ:

Նախասենյակում պառկած եր Ստեփանը. զարթեցրեց նրան և ինչ-վոր բան հրամայեց կիսաձայն, վորին Ստեփանը պատասխանեց կես հորանջելով, կես ծիծաղելով: Գավրիլան գնաց, իսկ Ստեփանը վեր թռավ տեղից, կաֆտանն ու կոշիկները հագավ և դուրս յեկավ շեմքում կանգնեց: Չանցավ հինգ րոպե, Գերասիմը յերևաց, իր անբաժան Մուժուլի ուղեկցութեամբ, փայտի մի ահագին կապոց շալակին (տիրուհին հրամայել եր, վոր իր ննջարանն ու առանձնասենյակը տաքացնեն մինչև իսկ ամառը): Գերասիմը կողքանց կանգնեց դռան առջև, ուսով հրեց այն և իր բեռով մտավ ներս: Մուժուլն, ըստ սովորութեան, մնաց նրան սպասելու: Այդ ժամանակ Ստեփանը, հարմար բոլեյից ոգավելով, հարձակվեց հանկարծ նրա վրա, ինչպես ուրուրը ճուտի վրա, սեղմեց նրա կուրծքը գետնին, դրկեց և, մինչև անգամ գլխարկը չծածկելով՝ վազեվազ դուրս յեկավ բակից, նստեց առաջին պատահած կառքը և գնաց ուղիղ Ախոտնիյ Րյազ: Այդ տեղ նա գնող գտավ, Մուժուլին ծախեց հիսուն կոպեկի այն պայմանով միայն, վորպեսզի նա մի շաբաթ գոնե կապած պահի նրան, և ինքն իսկույն վերադարձավ. բայց դեռ տուն չհասած՝ կառքից իջավ և տան բոլորքը շրջան անելով՝ յետևի փողոցից պարսպի վրայով թռավ բակը. դռնով վախենում եր գնալ, վոր Գերասիմին չհանդիպի:


Ասե՛նք նրա անհանգստութունն իզուր եր: Գերասիմը վաղուց բակում չեր: Տնից դուրս գալով՝ նա անմիջապես դես ու դեն ընկավ Մուժուլին վորոնելու. նա դեռ չեր հիշում, վոր Մուժուլն յերբևիցե չսպասեր իր վերադարձին,

ու այս-այն կողմ ընկնելով՝ սկսեց փնտռել, կանչել նրան իրեն հատուկ ձայներով... վազեց իր խուցը, խոտանոցը, նետվեց փողոց—գես-գեն... Մուսուհն չկա, Մուսուհն կորել է: Գերասիմը դիմեց մարդկանց, ամենահուսահատ նշաններով հարց ու փորձ արավ. հողից կես արշին բարձր ցույց տալով՝ պատկերացրեց Մուսուհին ձեռներով... Մառայողներին վոմանք, իսկապես չիմանալով ուր է չքացել Մուսուհն, գլուխները շարժում էին միայն, մյուսները, վոր գլխեյին, պատասխանի փոխարեն ծիծաղում էին, իսկ ավագ սպասավորը ծանր ու մեծ կերպարանք ընդունելով՝ սկսեց բզավել կառապանների վրա: Այդ ժամանակ Գերասիմը դուրս յեկավ հայաթից:

Որը մթնում եր արդեն, յերը նա վերադարձավ: Նրա հոգնած տեսքից, անհաստատ քայլվածքից և փոշոտված շորերից կարելի յեր յենթադրել, վոր Մոսկվայի կեսը վոտ տակ է տվել: Նա կանգնեց տիրուհու տան լուսամուտների դիմաց, աչք անեց սանդուղքը, ուր յոթ ծառայեր հավաքված կանգնած, յետ դարձավ և մի անգամ ել կանչեց «Մուսուհն»:— Մուսուհն չերկաց: Գերասիմը նորից հեռացավ: Բուրբը նայեցին նրա յետևից, բայց վոչ մեկը վոչ ժպտաց, վոչ ել մի խոսք ասավ: Իսկ հետևյալ առավոտ ամեն բանի հետաքրքիր ձևովոր Անտիպկան խոհանոցում պատմում եր, վոր խուհն ամբողջ դիշեր հառաչել է:

Հետևյալ ամբողջ որը Գերասիմը չերկաց, այնպես վոր նրա փոխարեն ջրի գնաց կառապան Պատապը: Տիրուհին ծառայողների ավագ Գավրիլային հարցրեց, թե կատարված է արդյոք իր հրամանը: Գավրիլը պատասխանեց, վոր կատարված է: Մյուս առավոտ Գերասիմը իր խցից դուրս յեկավ աշխատանքի: Ճաշին յեկավ հաց կերավ և դարձյալ գնաց առանց սրան կամ, նրան գլուխ տալու: Նրա դեմքը, վոր ա-

ոանց այն ել զուրկ եր կենդանությունից, ինչպես բոլոր
խուլ ու համբներինը, այժմ կարծես քարացել եր: Ճաշից հե-
տո նա կրկին զուրս յեկավ հայաթից, բայց կարճ ժամանա-
կով, վերադարձավ և իսկույն զնաց խոտանոց: Գիշերն
իջավ, լուսնյակ, պայծառ մի գիշեր: Գերասիմը պառկած
հառաչում եր և շարունակ շուռ ու մուռ գալիս անկողնում.
Մեկ ել հանկարծ զգաց, վոր իբր թե իր փեշը քաշում են.
նա ամբողջ մարմնով դողդողաց, բայց գլուխը չբարձրացրեց
և մինչև անգամ աչքերը փակեց. բայց ահա նորից փեշը քա-
շեցին, առաջվանից ավելի ուժով: Գերասիմը վեր թռավ...
նրա առաջ թռկի մի կտոր վզին կանգնած եր Մուսուճն և
պոչը շարժում եր շարունակ: Յերկարածիզ մի ճիշ զուրս
թռավ Գերասիմի անխոս կրծքից. նա բռնեց Մուսուճին և
սեղմեց կրծքին. Մուսուճն մի ակնթարթում լիզեց նրա քիթը,
աչքերը, բեղերը և միրուքը... Գերասիմը կանգնեց, մտա-
ձեց, զգուշությամբ զուրս յեկավ խոտանոցից, նայեց շուրջը
և, հավաստիանալով, վոր իրեն վոչ-վոք չի տեսնի, շտապեց
իբ խուցը: Դեռ առաջուց Գերասիմը գլխի յեր ընկել, վոր
շունն ինքն իրեն չի կորել, վոր նրան տարել են, յերևի տի-
րուհու հրամանով. ծառայողները նշաններով բացատրել ե ին
նրան, թե ինչպես նրա Մուսուճն ուղեցել ե խանութին կծի-
ուստի և Գերասիմը վճռեց իր միջոցները ձեռք առնել: Ամե-
նից առաջ նա Մուսուճին հաց տվեց, փայփայեց, պառկեցրեց
ու ծածկեց, հետո սկսեց մտածել ու ամբողջ գիշեր մտածում
եր, թե ինչպես անի, վոր Մուսուճին մի լավ տեղ թաղցնի:
Վերջապես հնարը գտավ. — ամբողջ ցերեկը Մուսուճին կր-
թողնի խցի մեջ և յերբեմն միայն կգա տեսնելու, գիշերը կտանի
զուրս: Դրան անցքը նա պինդ խցեց իր հին վերարկուով և
ինքը լույսը նոր բացված բակում եր արդեն, կարծես վոչինչ
ել չեր պատահել. նա պահպանել եր նույնիսկ (անմեղ խորա-




138867

մանկութուն) իր դեմքի տխուր արտահայտութիւնը: Խեղճ ի ուլը մաքուր չէր ելկարող անցնել, վոր Մուսուսն իր կլանչոցով կմատնի իրան: Յեզ իսկապես շուտով տան մարդիկ բոլորն իմացան, վոր համբի շունը վերադարձել է և այժմ տանը փակված ե: Բայց Գերասիմին ու շանը խղճալուց, մասամբ ել գուցե, Գերասիմի յերկյուղից զգացնել չտվին նրան, վոր իրենք նրա զաղանիքը իմացել են: Մտառայողների ավագը ծոծրակը քորեց միայն և ձեռը թափ տվեց. «Ե՛հ, աստված իրա հետ: Գուցե խանուսը չի յել իմանում: Իսկ համբը յերբեք այնպիսի Զանասիրութիւն չէր ցույց տվել, ինչպես այդ որը. նա սրբեց, մաքրեց ամբողջ բակը, խոտերը արմատահան արավ, ծաղկանոցի ցանկի փայտերը կարգի բերեց, — մի խոսքով աշխատում, շարշարվում եր այնպես, վոր մինչև անգամ տիրուհին ել ուշադրութիւն դարձրեց նրա Զանասիրութիւն վրա: Որվա ընթացքում Գերասիմը մի յերկու անգամ թագուն գնաց փակված շանը տեսնելու, իսկ գիշերը նա Մուսուսի հետ միասին պառկեց վոչ թե խոտանոցում, այլ խցում, և միայն ժամը յերկուսին դուրս յեկավ նրա հետ մաքուր ոգում գրոսնելու: Ու բակում բավական յերկար գրոսնելով՝ նա ուզում եր արդեն վերադառնալ, յերբ տան պարսպի այն կողմը, նրբափողոցում ինչ-վոր խշխշոց լսվեց: Մուսուսն ականջները սրեց, մտաց, մտտեցավ պարսպի պատին, հոտնտեց և սկսեց բարձրաձայն հաջել: Ինչ-վոր հարբած մի մարդ յեկել եր այնտեղ գիշերելու: Այդ ժամանակ տիրուհին հենց նոր միայն աչքը կայրել եր յերկարատե շղթային հուզումից» հետո. այդպիսի հուզումներ միշտ պատահում եյին նրան չափազանց կուշտ ընթրիքից հետո: Ծան հանկարծական հաջոցը զարթեցրեց նրան. նրա սրտի զարկերն ավելացան. «Աղջկերբ, աղջկերբ, — նվալով կանչեց նա, — աղջկերբ: Աղջիկները վախվորած ներս ընկան ննջարան: «Ո՛ր, ո՛ր, մեռնում եմ, — խոսեց նա վշտահար, ձեռներն այս ու այն



կողմ տարածելով. — դարձյալ, դարձյալ այդ շունը...
ձյ, մարդ ուղարկեք բժշկի յետևից. դրանք ինձ ուղում են
սպանել... Շունը, դարձյալ այդ շունը, Ո՛յ՞, և նա գլու-
խը յետ ձգեց, վոր նշան եր ուշաթափության: Վազեցին բժշկի
յետևից: Նա յեկավ, տիրուհուն ուշքի բերեց և հետո, հան-
գրասության համար, կաթիլներ տվեց: Տիրուհին ընդունեց
կաթիլները և անմիջապես արտասվախառն ձայնով սկսեց
գանգատվել շանից, ծառայողներիավազ Գավրիլայից, իր բախ-
տից և այն բանից, վոր իրեն՝ խեղճ, պառավ կնոջը բոլորն
աչքաթող են արել, վոր վոչ-վոր իրեն չի խղճում և բոլորն
իր մահն են ցանկանում: Մինչ այդ խեղճ Մումուն շարու-
նակում եր հաջել, իսկ Գերասիմն ապարդյուն կանչում եր
նրան պարսպի մոտից: «Ահա... ահա... դարձյալ...» խոսեց
տիրուհին, և նրա աչքերը նորից կուլ գնացին: Բժիշկն ինչ
վոր բան շնչաց աղջկան, նա վազեց նախասենյակ, գարթե-
ցրեց Ստեփանին, իսկ Ստեփանը վազեց Գավրիլային գարթեց-
նի, և Գավրիլան բորբոքված հրամայեց տան բոլոր ծառայող-
ներին վտարի հանել:

Գերասիմը յետ նայեց, լուսամուտներում տեսավ լույս
ու ստվերներ. նրա սիրտը վատ բան զգաց, Մումուն թևի
տակ առավ, վազեց մտավ իր խուցը և դուռը փակեց: Մի
քանի բոպե հետո հինգ մարդ ուղում ելին բանալ նրա
դուռը, բայց նիգերի դիմադրությանը հանդիպելով՝ կանգ
առան: Յեկավ Գավրիլան սաստիկ հեալով և բոլորին հրա-
մայեց մինչև առավոտ մնալ այդտեղ և հսկել, իսկ ինքը
շտապեց սղասավոր աղջկերանց սենյակը և նրանց զլխա-
վորի՝ Լյուբով Լյուբիմովնայի միջոցով հրամայեց հայտնե-
տիրուհուն, վոր շունը, զժբախտաբար, նորից ինչ-վոր
տեղից յետ ե յեկել, և վոր վազն ևեթ նա կենդանի չի լինի
և տիրուհին թող վողորմած լինի՝ չբարկանա ու հանգիստ
մնա: Տիրուհին, հավանորեն, այնքան ել շուտ չեր հանգստա-



նա, յեթե բժիշկը տասերկու կաթիլի փոխարեն քառասուն կաթիլ չտար. այդ ազդեց նրան և քառորդ ժամից արդեն նա քնած էր խոր ու խաղաղ քնով. իսկ Գերասիմը, ամբողջովին գունատ, պառկել էր իր մահճակալին և Մուսուլի բերանը պինդ սեղմել:

Նեպեյալ առավոտ տիրուհին զարթնեց բավական ուշ: Գավրիլան սպասում էր նրա զարթնելուն, վորպեսզի Գերասիմի տան վրա հարձակվելու հրաման տա, իսկ ինքը պատրաստվում էր տիրուհու հանդիմանություններն ու նախատինքը լսելու: Բայց վոչինչ էլ չեղավ: Անկողնում պառկած տիրուհին հրամայեց իր մոտ կանչել աղջիկներից մեկին:

— Լյուբով Լյուբիմովնա, — սկսեց նա հանդարտ և թույլ ձայնով. — սիրում եր նա յերբեմն հալածված ու վորբացած, թշվառ ձեանալ. ել ինչ ասել կուզի, վոր այդ ժամանակ տան բոլոր մարդիկ իրենց անհարմար եյին զգում. — Լյուբով Լյուբիմովնա, տեսնում եք ինչ զրության մեջ եմ. գնացեք, հոգիս, Գավրիլ Անդրեյիչի մոտ, խոսեք նրա հետ. միթե մի շուն նրա համար ավելի թանկ է իր տիրուհու հանգստությունից ու կյանքից: Յես չեյի կամենա այդ բանին հավատալ, — ասելացրեց նա խորապես հուզված. — գնացեք, հոգիս, բարի յեղեք, գնացեք Գավրիլ Անդրեյիչի մոտ:

Լյուբով Լյուբիմովնան գնաց Գավրիլայի սենյակը: Հայտնի չե ինչ խոսք ու զրույց յեղավ նրանց մեջ, բայց մի քիչ անց մարդկանց մի ահագին ամբոխ բակի միջով շարժեց դեպի Գերասիմի խուցը: Առջևից գնում էր Գավրիլան, նրա յերկու կողմից սպասավորներն ու խոհարարները: Լուսամուտից նայում էր քեռի Յվոսաը և կարգազրություններ անում, այսինքն ձեռքերը շարժում էր միայն: Ամենքի յետևից թռչկոտալով ու ծամածռություններ անելով գնում էյին փոքրիկ աղաներ, վորոնց մի մասն յեկել էր հարևան հայաթներից: Գերասիմի խուցը տանող սանդուղքին նստել էր մի

պահակ, դռները մտա կանգնել ելին յերկուսը փայտավորված։
Սկսեցին սանդուղքով բարձրանալ, ու բռնեցին նրա ամբողջ
երկարութունը։ Գավրիլան մտտեցավ դռանը, բռունցքով
ծեծեց և կանչեց.

— Բաց,

Լավեց խեղդված հաջոց, բայց պատասխան չեղավ։

— Կու՛ւս եմ՝ բաց, — կրկնեց նա։

— Ախր, Գավրիլ Անդրեյիչ, — նկատեց ներքևից Ստեփանը,
— չե՛ վոր նա խուլ է, չի լսում։

Ամենքը ծիծաղեցին։

— Հապա ի՛նչ անենք, ասավ վերևից Գավրիլան։

— Այդտեղ դռան վրա ծակ տեղ կա, — պատասխանեց
Ստեփանը. — փայտով շարժեցեք ենպես։

Գավրիլան կռացավ։

— Նա ծակը ի՛նչ-վոր վերարկու յե կոխել։

— Դուք ել վերարկուն դեպի ներս բռթեցեք։

Նորից խուլ հաջոց լսվեց։

— Տե՛ս, տե՛ս, ինքն իրան մատնում է, — նկատեցին
ամբոխի մեջ և նորից ծիծաղեցին։

Գավրիլան ականջի յետևը քորեց։

— Չե՛, ախպեր, ասավ նա վերջապես, — վերարկուն բո-
թիր ինքդ, յեթե ուզում ես։

— Լավ, համեցեք։

Յեկ Ստեփանը բարձրացավ վերև, փայտը վերցրեց, վե-
րարկուն հրեց ներս և սկսեց փայտի ծակի մեջ խաղացնելով՝
կրկնել։ Ե՛րուրս արի, դուրս արի։ Նա դեռ փայտը տարու-
բերում էր, յերբ հանկարծ խուլցի դուռն արագ բացվեց. սպա-
սավորների ամբողջ խումբը դիտի վայր գլորվեց սանդուղքից,
ու ամենից առաջ Գավրիլան։

— Դե՛, դե՛, դե՛, — կանչեց Գավրիլան ներքևից. — խելո՞ք
կաց, ա՛յ...

Գերասիմն անշարժ կանգնեց շեմքում: Ամբոխը հավաքվեց սանդուղքի վտտներին մոտ: Գերասիմը դերմանական կաֆտան հագած այդ մանր մարդկանց նայում եր բարձրից, ձեռները թեթևակի կողքերին կանթած: Իր գյուղական կարմիր վերնաշապկով նա մի հսկա յեր թվում նրանց առաջ: Գավրիլան մի քայլ արավ առաջ գնալու:

— Տե՛ս, ա՛յ, — ասավ նա, — շարություն մի անի:

Յե՛վ սկսեց նշաններով հասկացնել, վոր տիրուհին ահա նրա շունը պահանջում ե անպատճառ. տուր այդ շունը իսկույն, յեթե վոչ վատ կլինի:

Գերասիմը նայեց նրան, ցույց տվեց շունը, ձեռը տարավ-բերեց իր վզի մոտ այնպես, կարծես ողակ եր գցում, ու հարցական դեմքով նայեց ծառայողներին ավագին:

— Այո՛, այո՛, — ասավ Գավրիլան գլուխը շարժելով. — անպատճառ:

Գերասիմն աչքերը ցած գցեց, հետո հանկարծ ցնցվեց, կրկին ցույց տվեց Մուսուլին (վոր բոլոր այդ ժամանակը նրա մոտ կանգնած պոչը շարժում եր անմեղ և ականջները խլշում), նորից իր վզի վրա խեղդելու նշան ցույց տվեց և նշանակալից ձեռով ձեռը խփեց իր կրծքին, վորով կարծես հայտարարում եր, վոր ինքն իր վրա յե վերցնում Մուսուլին վոչնչացնելու գործը:

— Չե, դու կխաբես, — շարժեց ձեռը Գավրիլան իբրև պատասխան:

Գերասիմը նայեց նրան, արհամարհանքով ծիծաղեց, կրկին ձեռը կրծքին խփեց և դուռը շրխկոցով փակեց:

Բոլորը լուռ իրար նայեցին:

— Սա ի՞նչ ե նշանակում, — սկսեց Գավրիլան, — նորից փակվեց:

— Թողե՛ք, Գավրիլ Անդրեյիչ, — ասավ Ստեփանը, — նա ասածը կանի, յեթե խոստանում ե: Նրա ընտելյունն եղպես

ե, Յեթե խոստանում ե— ել պրծալ: Եղ բանում նա մեզ նը-
ման չի. ինչ վոր ճիշտ ե, ճիշտ ե: Այո:

— Այո, — կրկնեցին բոլորը և գլուխները թափ տվին: — Եղ-
պես ե, այո:

— Ե՛հ, գուցե, տեսնենք, — ասավ Գավրիլան. — իսկ մեկը
թող ելի Ֆա գարաուլ: Յեկ, Յերոշկա, — ավելացրեց նա, դի-
մելով ինչ-վոր խեղճ մարդու, վոր այգեպան եր համարվում.
— մի բան վոր գործ չունիս, փայտը վերցրու և այստեղ նըս-
տիք. հենց վոր մի բան յեղալ, իսկույն վազի իմ կուշար:
Յերոշկան փայտը վերցրեց և նստեց սանդուղքի առա-
ջին աստիճանին: Ամբոխը ցրվեց, բացի մի քանի հետաքըր-
քիրներից ու փոքրիկ տղաներից, իսկ Գավրիլան վերադարձալ
տուն և հրամայեց աղջկերանց մեկի միջոցով հայտնել տի-
բուհուն, վոր ամեն ինչ կատարված ե:

Բոլոր այս իրարանցումից մի ժամ հետո խուլցի դուռը
բացվեց և Գերասիմը դուրս յեկալ. նա հազել եր իր տոնա-
կան կաֆտանը: Նա իր հետ դուրս բերեց Մուժույին վիզը
թող դրած: Յերոշկան մի կողմ քաշվեց և նրան ճանապարհ
տվեց անցնելու: Գերասիմը գնաց դեպի բակի դուռը: Հայա-
թում յեղած փոքրիկ տղաները լուռ, աչքերով հետեցին նը-
րան: Գերասիմը նույնիսկ յետ չնայեց, գլխարկը ծածկեց
միայն փողոցում: Գավրիլան նույն Յերոշկային ուղարկեց նը-
րա յետևից նայելու: Յերոշկան, հեռվից տեսնելով, վոր Գե-
րասիմը շան հետ միասին ճաշարան մտալ, սպասեց նրա
դուրս գալուն:

Ճաշարանում Գերասիմին ճանաչում և նրա նշանները
հասկանում եյին: Նա իր համար մտով կերակուր խնդրեց և
նստեց արժուկներով սեղանին հենված: Մուժուն կանգնած
նրա աթոռի մոտ՝ խելացի աչքերով նայում եր նրան: Նրա
մազերը լավ հարթված եյին. յերևում եր, վորքիչ առաջ նրան
սանրել են: Գերասիմին կերակուր բերին: Նա հաց փրթեց

նրա մեջ, միսը կտոր-կտոր արավ և ավստն զրեց հատակին, Մուսուն սկսեց ուտել իր սովորական բարեկիրթ ձևով, դունչը հազիվ կերակրին մոտեցնելով, Գերասիմը յերկար նայում էր նրան, հանկարծ արցունքի յերկու խոշոր կաթիլ ընկան նրա աչքերից. մեկն ընկավ շան թեք ճակատին, մյուսը կերակրի մեջ: Նա դեմքը ծածկեց ձեռքով: Մուսուն կերավ կերակրի կեսը և մի կողմ քաշվեց դունչը լիզելով: Գերասիմը յելավ տեղից, վճարեց կերակրի գինը և դուրս յեկավ: Յերոշկան Գերասիմին տեսնելով՝ ցատկեց անկյունի մյուս կողմը, և յերբ Գերասիմն յեկավ անցավ իր մոտով, նա կրկին հետևեց նրան:

Գերասիմը գնում էր առանց շտապելու, Մուսույի թուրբոնած: Հասնելով փողոցի անկյունը, նա կանգ առավ կարծես մտածմունքի մեջ և հանկարծ արագ քշյալերով դիմեց դեպի գետը: Ծանապարհին նա ավով մտավ նոր կառուցվող մի տան բակ և այնտեղից յերկու աղյուս բերեց կոնատակը զրած: Հասնելով գետը, նա գնաց-հասավ մի տեղ, ուր ցցերին կապված յերկու նավակ եյին կանգնած. նա Մուսույի հետ միասին ցատկեց դրանցից մեկի մեջ: Բանջարանոցի ծայրում խրվված վրանից դուրս յեկավ մի կաղ ձերուկ և պոռաց նրա վրա: Բայց Գերասիմը զլիսով արավ միայն և այնպես ուժեղ թիավարել սկսեց, վոր, թեև գետի հոսանքին հակառակ, մի ակնթարթում հարյուր սաժեն առաջ սլացավ: Ծերուկը կանգնեց, կանգնեց, մեջքը քորեց նախ ձախ, ապա աջ ձեռքով և կաղալով վերադարձավ նորից իր վրանը:

Գերասիմը շարունակ թիավարում էր ու թիավարում: Ահա Մոսկվան արդեն յետ մնաց: Ահա գետի ավերին տարածվում են մարգագետիններ, բանջարանոցներ, դաշտեր, պուրակներ, յերեացին խրճիթներ: Գյուղի հոտ է գալիս: Գերասիմը թիերը ձգեց, գլուխը սեղմեց Մուսույին, վոր նստած էր նրա առջև չոր տախտակի վրա—հատակը լցված էր ջր-

րով—և այդպէս մնաց անշարժ, ուժեղ բազուկներով շան մեջքը գրկած: Իսկ նազակը մինչ այդ ալիքներով կամաց-կամաց տարվում էր յետ դեպի քաղաք: Վերջնպէս Գերասիմն ուղղվեց արագ և ինչ-վոր ցավազին մի կատաղութուն դեմքին, վերցրած աղյուսները թռկով կապեց իրար, հետ թռկի ծայրերը կապեց Մուսուլի վիզը, բարձրացրեց ու բռնեց նրան դետի վրա ու վերջին անգամ նայեց նրան... Մուսուլն հավատով ու աներկյուղ նայեց տիրոջ և պոչը շարժեց կամացուկ: Գերասիմը յերեսը շուռ ավեց, աչքերը փակեց և ձեռքերը բաց թողեց... Ու չլսեց վոչինչ—վոչ ընկնող Մուսուլի սուր կլանչոցը, վոչ ելջրի ծանր ճղփյունը. ամենաազմը-կոտ որը լուռ ու անշշուկ էր նրա համար, ինչպէս վոչ մի խաղաղ գիշեր անձայն չէ մեզ համար, և յերբ նա աչքերը բաց արավ նորից, ձուաջվա պէս դետի յերեսով, կարծես միմայնց հալածելով՝ շտապով վազում էյին փոքրիկ ալիքները և առաջվա պէս ճողփյունով զարնվում էյին նազակի կողերին և միայն հեռուն, դեպի ասին էյին վազում ինչ-վոր լայն-լայն կորագծեր:

Յերոշկան, հենց վոր Գերասիմը թագնվեց նրա աչքից, վերադարձավ տուն և պատմեց ինչ տեսել էր:

— Դե, իհարկե.—նկատեց Ստեփանը,— Գերասիմը նրան ջուրը կձգի: Արդեն կարող եք հանգիստ լինել, քանի վոր խոստացել ե...

Ամբողջ որը Գերասիմը չերևաց, նա ճաշվա հացին չե՛կավ: Յերեկոյան էլ, յերբ բոլորը հավաքվեցին ընթրիքի—նա չկար:

— Ի՛նչ զարմանալի տղա յե եզ Գերասիմը,— խոսեց հաստիկ լվացարարուհին իր նման ճղճղալով,— միթե կարելի յե մի շան համար եզպէս գնալ ման-զալ... Ձեմ հասկանում:

— Ախր Գերասիմն եստեղ էր,— գոչեց հանկարծ Ստեփանը, զգալով իր համար քաշովի վերցնելով:

— Ինչպես Յերբ:

— Յերկու սահաթ առաջ Ինչպես չե. փողոցի դռան մոտ պատահեցինք: Նա եստեղից եր գնում, հայաթից նոր եր դուրս գալի. Ուզեցի շան մասին հարցնեմ— քեֆը տեղը չեր: Ինձ ել բոթեց. Ինչպես յերևում ե՛ ուղում եր ասել— հեռու, մէ խոսի, ու մի ենպես դմբուզ հասցրեց վզակոթիս, վոր ո՛յ, ո՛յ, ո՛յ... — և Ստեփանն ակամա քմծիծաղով կուշ յեկավ ու վիզը քորեց:

Բուրբ ծիծաղեցին Ստեփանի վրա և ընթրիքից հետո գնացին քնելու:

Մինչդեռ նույն այդ ժամանակ, Տ. — ի խճուղով շտապով և առանց կանգ առնելու քայլում եր մի ինչ-վոր հսկա՝ պարկը մեջքին ու մի յերկար ձեռնափայտ ձեռին. Դա Գերասիմն եր: Նա գնում եր առանց յետ նայելու, շտապում եր տուն, իրենց գյուղը: Խեղճ Մուսուլին ջուրը ձգելուց հետո նա վաղեց իր խուցը, հապճեպով մի քանի բան-ման հավաքեց դրեց հին տապճակի մեջ, կապոց արավ, ուսը գցեց ու հայգաւ շանապարհը նա լավ դիտել եր դեռ այն ժամանակ, յերբ իրեն բերին Մոսկվա: Այն գյուղը, վորտեղից տիրուհին բերել եր նրան, ընկած եր խճուղուց քսանուհինգ վերստ հեռու: Նա գնում եր մի անընկճելի խիզախությամբ, կատաղի և ուրախ վճռահանությամբ: Գնում եր, ու նրա աչքերն ազահարար և ուղիղ նայում եյին առաջ: Նա շտապում եր այնպես, կարծես պառավ մայրը սպասում եր նրան հայրենի գյուղում, կարծես կանչել եր իր մոտ ստար յերկրում և ստար մարդկանց մեջ յերկար թափառելուց հետո... Հենց նոր իջած ամառային դիշերը խաղաղ եր և տաք. մի կողմից, այնտեղ, ուր արևը մայր մտավ, յերկինքը դեռ սպիտակին եր տալիս և թեթևակի կարմրած եր անհետացող որվա վերջին ցոլքերով. մյուս կողմից բարձրանում եր գորշ-կապույտ աղջամուղջը: Հարյուրավոր լորեր աղմկում եյին ամեն կողմ,

և նրանց հետ մրցելու համար կարծես ջրահավերբ ձայնարկում ելին իրար... Գերասիմը սակայն նրանց լսել չէր կարող. նա չէր կարող լսել նաև գիշերային մեղմ սոսափյունը ծառերի, վորոնց կողքով անցնում էր, բայց նա զգում էր հասնող հաճարի ծանոթ հոտը, վոր բուրում էր շարունակ մութ դաշտերից, զգում էր, թե ինչպես քամին, իր հայրենի քամին, քնքշաբար զարնվում էր իր յերեսին և խողում մազերի ու միրուքի հետ. տեսնում էր իր առաջ սպիտակին տվող ճանապարհը, իրանց տան ճանապարհը, վոր ձգվում էր նետի պես ուղիղ. նա տեսնում էր յերկնքում անթիվ աստղեր, վոր լուսավորում էին նրա ուղին, և առյուծի նման բայում էր նա առույզ ու կայտառ, այնպես վոր յերբ ծագող արեգակը իր աամուկ-կարմիր շողերով լուսավորեց մեծ քայլերով հեռացող հսկային — Մոսկվայի և նրա միջև ընկած էր արդեն յերեսուն ու հինգ վերստ...

Յերկու որից հետո նա իր տանն էր արդեն, ի մեծ զարմանս այն գինվորի կնոջ, վորին տեղավորել էին նրա խրրճիթում: Արբապատկերի առաջ աղոթելուց հետո նա գնաց տանուտերի մոտ: Ճանուտերը մի քիչ դարմացավ, բայց խոտհունձը հենց նոր սկսվել էր. Գերասիմին, վորպես ընտիր մշակի, հենց այդպեղ ձեռը դերանդի տվին, և նա, առաջվա պես, գնաց հունձ անելու, այնպես վոր գյուղացիները նախանձում էին միայն, տեսնելով նրա ձեռի թափն ու հնձած լասերը...

Իսկ Մոսկվայում, Գերասիմի փախչելու հետևյալ որը, տան սպասավորներն զբաղվեցին նրանով: Գնացին նրա խուցը, ման յեկան, հետո հայտնեցին Գամլիիլային, նա յեկավ, նայեց, ուտերը վեր քաշեց և վճռեց, վոր համբը կամ փախել և կամ խեղդվել իր շան հետ միասին: Իմաց տվին վոստիկանության, հայտնեցին տիրուհուն: Տիրուհին բարկացավ, լաց յեղավ և հրամայեց, ինչ ելլինի, գտնել նրան, հավատացրեց,

վոր ինքը յերբեր չի հրամայել շունը վռննչացնել և, վերջապես, այնպես մի շշպրեց Գազրիլային, վոր նա ամբողջ որը գլուխը շարժում եր և ասում. «Հըմ»... Վերջապես գյուղից լուր յեկավ, թե Գերասիմն այնտեղ եւ Տիրուհին մի քիչ հանգըստացավ. սկզբում ուզում եր հրամայել, վոր նրան անմիջապես յետ բերեն Մոսկվա, բայց հետո հայտնեց, վոր այդտեսակ ապերախտ մարդը իրեն սկի հարկավոր չի։ Ասենք, դրանից հետո նա ինքը շուտով մեռավ, իսկ ժառանգները բան ու գործը Գերասիմը չեր. նրանք մոր մնացած ծառայողներին ել բաց թողին։

Յեզ մինչև այսօր Գերասիմն ապրում ե մեն-մենակ իր մենավոր խրճիթում. նա առողջ և ուժեղ ե առաջվա պես, մենակ շորս մարդու բան ե անում ու առաջվա պես ելի լուրջ ու ծանր ե։ Բայց հարեանները նկատել են, վոր նա Մոսկվայից վերադառնալուց հետո վոչ մի շուն չի պահում իր մոտ։ «Ասենք, — խոսում են գյուղացիները, — շունը նրա ինչին ե պետք. գողին զուով ել չես կարող տանել նրա դուռը։ Սյս համբալն ե պտտում համրի հսկա ուժի մասին։



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.






[124.]

A $\frac{1}{38}$

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. ԶԵՐԿ



ЦЕНА

A ¹¹ / 38867